## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ԳՏՀ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի մայիսի 04-ին կնքված N ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ԳՏՀ-18/1.1 պայմանագրում 2018 թվականի նոյեմբերի 09-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ N 1**: Շինարարական աշխատանքների կատարման ընթացքը վերահսկելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել տեխնիկական հսկողության ծառայության կատարման ժամկետը ավելացնել 30 օրացուցային օրով:

**Փոփոխության նկարագրություն:** Պայմանագրի Հավելված N1 հանդիսացող տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց սահմանված ծառայությունների մատուցման ժամկետը ավելացվել է 30 օրացուցային օրով:

**Փոփոխության հիմնավորում:** Պայմանագրի 7.5 և 7.6 կետերը:

Պատվիրատու՝ ***ՀՀ քննչական կոմիտե***

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**04.05.2018թ. կնքված ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ԳՏՀ-18/1.1 պայմանագրի**

Ք. Երևան <<09>> նոյեմբերի 2018թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս դեպարտամենտի ղեկավար Ա. Նիկոյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բագարանի Բարիք» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Մարգարյանի, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև կողմեր, հիմք ընդունելով կողմերի միջև 04.05.2018թ. կնքված N ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ԳՏՀ-18/1.1 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան**

Կողմերը որոշեցին Պայմանագրի Հավելված N1 հանդիսացող տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց սահմանված ծառայությունների մատուցման ժամկետը ավելացնել 30 օրացուցային օրով՝ մինչև 08.12.2018թ.:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ քննչական կոմիտե<br>ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի<br>գործառնական վարչություն,<br>Հ/Հ 900011000834<br>ՀՎՀՀ 02631263 | «Բագարանի Բարիք» ՓԲԸ<br>ք. Երևան, Տիգրան Մեծի 4<br>«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ,Կիևյան մ/ճ<br>Հ/Հ 11500498836200<br>ՀՎՀՀ 02235628<br>էլ. հասցեն՝ bagaranibariq@gmail.com<br>հեռ. 093 71 32 04 |
| (ստորագրություն)<br>Կ.Տ | (ստորագրություն)<br>Կ.Տ |